# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*24 փետրվարի 2020 թվականի N 51*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հանգուցյալ Ծովիկ Աբրահամի Խալաթյանին և համասեփականատեր հանգուցյալ Տիգրան Իվանի Խալաթյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և տնամերձին տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Իսակովի փողոց տուն 67 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 24
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2020 թվականի N 52

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլուխը,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին՝ չի խանգարում ինժեներական կառույցներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր ք., Սիրանեսի փողոց 2-րդ նրբանցք տուն 4 հասցեում գտնվող Ելիզավետա Արիստակեսի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված 211.48 քմ մակերեսով կառույցը (բնակելի տունը և օժանդակ կառույցները) համարել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Ելիզավետա Արիստակեսի Ավագյանին շինության օրինականացման համար վճարել 1քմ՝ 1300 դրամ, ընդամենը 274924 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.04.2003թ.-ի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:
3. Տնամերձին, բնակելի տանը և օժանդակ կառույցներին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Սիրանեսի փողոց 2-րդ նրբանցք տուն 4:
4. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 25

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

25 փետրվարի 2020 թվականի N 53

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլուխը, և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին՝ չի խանգարում ինժեներական կառույցներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնք Եղեգնաձոր ք., Իսակովի փողոց տուն 1 հասցեում գտնվող Մամիկոն Լյուդվիգի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված 57.40 քմ մակերեսով կառույցը (ավտոտնակը) համարել օրինական:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Մամիկոն Լյուդվիգի Գրիգորյանին շինության օրինականացման համար վճարել 1քմ՝ 1300 դրամ, ընդամենը 74620 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.04.2003թ.-ի թիվ 470-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2020թ. փետրվարի
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

25 փետրվարի 2020 թվականի N 54

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, ինչպես նաև Եղեգնաձոր համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում :հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 25
ք.Եղեգնաձոր

Հավելված N 1
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
«25» փետրվար 2020 թ-ի N 54 որոշման

# ԿԱԶՄ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝**

1. խորհրդի ղեկավար՝ Դավիթ Հարությունյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Վարդան Ավագյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Անժելա Սարգսյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանի՝ Սաքանյան Գևորգ,
2) ավագանի՝ Ոսկանյան Սամվել,

ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Սուրեն Հարությունյան /Եղեգնաձորի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/(համաձայնությամբ),
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ /Սամվել Գալստյան ոստիկանության պետի տեղակալ/(համաձայնությամբ),
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Խաչիկ Ասլանյան/«Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճան բաժնի պետ» /(համաձայնությամբ),
դ. կապի պատասխանատու՝ Հովսեփ Հովսեփյան /«Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի հարավ բաժնի պետի ժ/պ /(համաձայնությամբ),
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Կարեն Ասատրյան /«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն/(համաձայնությամբ),
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Աշոտ Հարությունյան /համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ/,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Գագիկ Սմբատյան /«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Արաքս մ/ճ-ի Եղեգնաձոր ցանցի պետ/(համաձայնությամբ),
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Արմեն Աղաջանյան /համայնքապետարանի գլխավոր մասնագետ-ճարտարապետ/,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Գվիդոն Հարությունյան /«Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն/,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Անի Առաքելյան /համայնքապետարանի սոցիալական աշխատող/:

Հավելված N 2
Եղեգնաձոր համայնքի ղեկավարի
«25» փետրվար 2020 թ-ի N 54 որոշման

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.**

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Եղեգնաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Եղեգնաձորի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

**1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումը, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

**2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝**

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2020 թվականի N 55*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հանգուցյալ Հեղինե Գրիգորի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և տնամերձին տրամադրելիհետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ,համայնք Եղեգնաձոր ք., Սպանդարյան փողոց տուն 9 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 26
ք.Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 փետրվարի 2020 թվականի N 56

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0050 ծածկագրով, 0.00071 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց թիվ 13/7/2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2020 թվականի N 57

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0051 ծածկագրով, 0.00145 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Միկոյան փողոց թիվ 20/3:

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2020 թվականի N 58

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0051 ծածկագրով, 0.00521 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Շահումյան փողոց թիվ 12/5:

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 27

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

27 փետրվարի 2020 թվականի N 59

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0321-0005 ծածկագրով, 0.15527 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2020 թվականի N 60

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 10-001-0383 ծածկագրով, 3.25000 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 փետրվարի 2020 թվականի N 61*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 14 -րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 27 դեկտեմբերի 2019թ.-ի թիվ 98-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով <<Կաբարկո>> սահմանափակ պատասխանատու ընկերության տնօրեն Վ.Մելիքյանի գրությունը (մուտք՝ 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 125).

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Թույլատրել <<Կաբարկո>> սահմանափակ պատասխանատու ընկերությանը, Եղեգնաձոր համայնքի Միկոյան փողոց 1 հասցեում տեղադրել արտաքին գովազդ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 09*

### *ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ*

Տրված՝ *27 փետրվար 2020թ.*

Թույլատրված գործունեության անվանումը՝ *Արտաքին գովազդ տեղադրելու:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*,, ԿԱԲԱՐԿՈ,, ՍՊԸ, ք.Երևան, Ոչնեցու փ. 58/2, ՀՎՀՀ՝ 00159949:*

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝ *Ք.Եղեգնաձոր,Միկոյան փող.1, 2 քմ:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2020-ից մինչև 30 հունիս 2020-ը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*27 փետրվարի 2020 թվականի N 62*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 14 -րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 27.12.2019թ.-ի թիվ 98 -Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով <<ԷԿԼՕՖ >> ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրեն Ստեփան Թորոսյանի դիմում-հայտը (մուտք՝ 2020 թվականի փետրվարի 21-ի թիվ 166).

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Թույլատրել ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը , Եղեգնաձոր համայնքի Նարեկացի 18 հասցեում տեղադրել արտաքին գովազդ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 07*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ*

Տրված՝ *08 հունվար 2020թ.*

Թույլատրված գործունեության անվանումը՝ *Արտաքին գովազդ տեղադրելու:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ *ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ, ք. Էջմիածին,Բաղրամյան 2, ՀՎՀՀ՝ 04719427:*

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝ *Նարեկացի18, 1.68քմ:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2020-ից մինչև 31 հունվար 2020-ը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2020 թվականի N 63*

## *ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հանգուցյալ Հակոբ Դերենիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2152725 վկայական) առևտրի սրահի՝ ք. Եղեգնաձոր, Գլաձորյան փ. հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Գլաձորյան փողոց թիվ 2/2 ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից։

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 27
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 փետրվարի 2020 թվականի N 64*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հանգուցյալ Նորայր Բագրատի Հակոբյանին և համասեփականատերեր հանգուցյալ Անիկ Վաղինակի Զաքարյանին, հանգուցյալ Սամվել Նորայրի Հակոբյանին, Անժելա Անդրեասի Հակոբյանին, Մարիետա Սամվելի Հակոբյանին , հանգուցյալ Նարեկ Սամվելի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2152779 վկայական) բնակելի տան և տնամերձի ք. Եղեգնաձոր, Նոր ավան հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Սիրանեսի փողոց տուն 7 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*28 փետրվարի 2020 թվականի N 65*

*ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հանգուցյալ Նորայր Բագրատի Հակոբյանին և համասեփականատերեր հանգուցյալ Անիկ Վաղինակի Զաքարյանին ,հանգուցյալ Սամվել Նորայրի Հակոբյանին, Անժելա Անդրեասի Հակոբյանին, Մարիետա Սամվելի Հակոբյանին , հանգուցյալ Նարեկ Սամվելի ՀԱկոբյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2096554 վկայական) տնամերձ հողամասի ք. Եղեգնաձոր, Նոր ավան հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Սիրանեսի փողոց թիվ 7/1 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 28
ք.Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 փետրվարի 2020 թվականի N 66*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բուդյոննի Արտաշի Ստեփանյանին և համասեփականատեր հանգուցյալ Սաթիկ Թադևոսի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1226521 վկայական) բնակելի տան և տնամերձի ք. Եղեգնաձոր, Կոմիտաս նրբ. 9 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Կոմիտասի փողոց 1-ին նրբանցք տուն 9 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 28
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2020 թվականի N 67

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հանգուցյալ Հակոբ Դերենիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 08022012-10-0005 վկայական) հողամասի՝ ք. Եղեգնաձոր, Հյուսիս-Արևելյան թաղամաս, 37Ա հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Գլաձորյան փողոց թիվ 2/2/1 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 28
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

*28 փետրվարի 2020 թվականի N 68*

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98 - Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Հակոբ Գիվարգիզյանին Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 10/22 հասցեում գտնվող առևտրի սրահում վաճառելու ոգելից խմիչքներ և ծխախոտ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. փետրվարի 28
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԽԾ - 03*

*ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ *28 փետրվար 2020թ.*

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝ *Ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
*ՀԱԿՈԲ ԳԻՎԱՐԳԻԶՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, ՎԱՅՈՑ ՁՈՐ,ԵՂԵԳՆԱՁՈՐ,Մոմիկի Փ. , 2, /19, ՀՎՀՀ՝ 83716371:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ *ՄԻԿՈՅԱՆ 10/22,*

*Շինության տեսակը՝ Հիմնական շինություն:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2020-ից մինչև 31 դեկտեմբեր 2020-ը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*     *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 փետրվարի 2020 թվականի  N 69*

## *ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ն մասի 7-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98 - Ն որոշումը .

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Թույլատրել Ա/Ձ Անահիտ Սիմոնյանին Միկոյան 3/1 հասցեում գտնվող առևտրի սրահում վաճառելու թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*   *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. փետրվարի 28
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐի ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԹՄԱ - 02*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ՎԱՅՐՈՒՄ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ*

***Տրված*'28 փետրվար 2020թ.**

Թույլատրված գործունեության անվանումը՝ *Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք:*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ *ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆ, ք.Եղեգնաձոր Միկոյան 5, ՀՎՀՀ՝ 76824938:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ *Միկոյան 3/1:*

Թույլտվության գործողության ժամկետը՝ *01 հունվար 2020-ից մինչև 31 դեկտեմբեր 2020-ը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ